

անհիմն են թաղարու թիւններ չը համարուին, կորեւոր կը դատինք Արթ. Մեղքիսեգեկ վարդապետի ըստ մասնեայ աշխատասիրած «Հովուական Աստուածաբանութենէն» և հետեւեալ հաստատար ընթերցողաց հաղորդել:

ԱՐԹԱՆԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԻՈՒԹԵԱՆ

Եկեղեցական պաշտօնի մեծութիւնը և գերազանցութիւնը կը ծագի և կ'երեւի — նախ՝ իւր քարոզած վարդապետութեան գերազանցութենէն, որ է « Իմաստ-իման Դիւք կապարեաց » ինչպէս գրուած է. « Զիմաստութիւն խօսիմ ընդ կատարեալս » . Ա . Կորն . Բ . 6 : Այսինքն այնպիսի իմաստութիւն, որ զմարդիկ այնքան կատարեալ կ'առնէ, որչափ կարող են լինել, ոչ թէ հարեւանցի կերպով, ոչ թէ առերեւոյթս, ոչ թէ ճշմարտութեան մի մասն միայն ստուգանելով, այլ համայն ճշմարտութիւնն, համայն կատարելութիւնն : Այս պաշտօնէն մեծ պաշտօն չը կայ : Եթէ մէկը՝ որ և իցէ առարկայի կամ նիւթի վրայ անսխալ ճանաչողութիւն կամ ճշմարտութիւն ունի, արդէն մեծ մարդ կը համարուի : Յիսուս Քրիստոս, Պիղատոսի առջեւ, թագաւորութիւնը և ճշմարտութիւնն վիպելն իրարու հետ կը զօղէ : Արդ՝ պաշտօնէի քարոզածն եւս պէտք է լինի ճշմարտութիւն, պէտք է լինի այն ճշմարտութիւնը, որ գերազայն է, այն ճշմարտութիւնը, որով կեանքը կը բացատրուի և կը կառավարուի, այն ճշմարտութիւնը, որով կ'ապահովուի Աստուծոյ և մարդոյ, Արարչին և արարածոյն յարաբերութիւնը : Այս ճշմարտութիւնը քարոզելէն աւելի ինչ մեծ դործ կարող է լինիլ : Եւ անս' այս

քարոզութիւնն իսկ հովուի պաշտօնն է :

Երբոր՝ պաշտօնի մեծութիւնը կ'երեւի այս տեղէն, որ հովուի քարոզած վարդապետութիւնը Աստուծոյ յայանութիւնն է : Նորան հաւատարմութեամբ են պատգամները, այսինքն այն բաները՝ « Զոր ակն ոչ ետես եւ ունին ոչ լուաւ և ՚ի սիրա մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց . Ա . Կորն . Բ . 9 : Պաշտօնեայնէ ուրեմն Աստուծոյ անընդմիջական պատգամաբերն . « Որ ընդունի զձեզ, զիս ընդունի, և որ զիս ընդունի, ընդունի զառարկին իմ » . Մատթ . Ժ . 40 :

Երբոր՝ կ'երեւի այն կետէն՝ որ պաշտօնեայն է գործակից ընդ Աստուծոյ : « Զի Աստուծոյ գործակից եմք . . . Եթէ ուրուք գործն, զոր շինեաց կայցի, վարձս առցի, և եթէ ուրուք գործն այրեցի՝ տուժեցի, բայց ինքն կեցցի, այլ այնպէս որպէս թէ՛ ՚ի հուրոյ . Ա . Կորն . Թ . 15 : Պաշտօնեայն գործակից է Աստուծոյ, որ հաճեցաւ համարատու լինել նորա հետ, կամ համերաշխաւոր լինել նորա հետ և իսուտացաւ աշխատիլ նորա համար և նորա ձեռամբ :

Զորոր՝ գերազանց է սոյն պաշտօնը, որովհետեւ հովուը կը քարոզէ, կ'աւետէ և կ'ընծայէ վրիպութիւնը : Եթէ այս պաշտօնը գատապարտութեամբ պաշտօն լինէր և հովուը՝ Աստուծոյ կողմէն միայն նորա օրհնքը քարոզէր, նապիսի կատարէր սոյն պարտքը թաւաճութեամբ և ստիճամբ . եւ սակայն այս պարտաւորութիւնը դարձեալ գերազանց պիտի լինէր : Բայց որովհետեւ Աստուած իրեն փառք համարեց ներքին, նա սոյն ներողութեան պաշտօնի մէջ եւս փառք դրուաւ, այսինքն փառաւորեց հովուի պաշտօնը : Այս պատ

ճառաւ անհա՛ Ս. Պօղոս ո՛չ միայն երկու անտեսութեանց , այլ եւ երկու պաշտօնէութեանց փրայ խօսելով՝ կ'աւսէ . « Որ եւ բաւականս արար զմեզ պաշտօնեացս նորոց Կոստանդանուպոլսոյն ո՛չ գրով , այլ եւ Հոգւով . զի գիրն սպանանէ , այլ Հոգին կեցուցանէ : Զի եթէ պաշտօն մահու գրով գրօշմեալ ՚ի տախտակն քարեղէն՝ եղև փառօք , զի մի կարացեն հայիլ որդիքն Իսրայելի յերեսն Մովսէսի՝ փան փառաց երեսաց նորա , որ խափանելոցն էր . սրջափ եւս առաւել պաշտօն Հոգւոյն եղիցի փառօք : Զի եթէ պաշտօն դատասարտութեան փառօք էր , սրջափ եւս առաւել պաշտօն արդարութեան փառօք : Քանզի ո՛չ եթէ փառաւորի փառաւորեան յայս մասին՝ փան առաւելութեան փառացն ո՛ր (Այսինքն առաջնոյն փառաւորութիւնը երկրորդին առաւելութեան մօտ անխառաւոր է) . Բ . Կրկն . Գ . 6-10 . բաց յայս մանէ յայտնի է , որ ինչպէս Աստուծոյ սղորմածութիւն փառքը , որ երկու անբաժան իրաց մէջ է (այսինքն նոյն սղորմածութեան և պողոց արդարութեան) նոյնպէս եւ քրիստոնէական պաշտօնի փառքը երկու մեծ տարբերներէ կը կազմի , զորս իւր աչաց առջև ունէր Եսայի մարգարէն , երբ այս խօնքերը կ'արտասանէր , « Իբրեւ զի գեղեցիկ են ՚ի վերայ լերանց սոք աւետարանչի համբաւոյն խաղաղութեան , իբրեւ աւետարանչի բարութեանց , զի լսելի արտօնից զիբիութիւն քո աւսել յՍիօն թէ՛ Քաթապոլիտի թէ՛ Աստուծոյն . Եսայի . ԾԲ . 7 :

Այս երկու տարբերքը կը պարտնակին այն կարողութեան մէջ , զոր տուա Յիսուս Առաքելոց և յետ նոցա ամեն Քրիստոնէաց պաշտօնէից , որ է սրբախել և կապել : Յիսուս Քրիստոս փրկարար պատուերներ աւանդելով

իւր աշակերտներուն և Աւետարանի պաշտօնին մեծութիւնը յոյց տալով՝ ասաց . « Ամեն ասեմ ձեզ , զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս , եւ զոր արձակիցէք յերկրի , եղիցի արձակեալ յերկինս » . Մատ . ԺԲ . 18 : Պաշտօնեայն կարող է կապել արձակելով և արձակել կապելով : Նա կը կապէ , երբ կը շղթայէ խիղճը կատարեալ օրինաց (Աւետարանի) հետ ազամանդեաց շղթաներով և խորհրդաւոր կապերով : Նա կ'արձակէ , երբ կը քակէ , կը խլէ դատասարտութեան օրէնքէն , հոչակելով բարձումն գերութեան և թողութիւն Աստուծոյ : Կապել և արձակելն երկու բեւեռք են , որ միշտ իրարու կը համապատասխանեն :

Ճշմարիտ է որ պաշտօնեայն կոպ մահուան է նոցա համար , որոց համար չէ՛ կոպ կենաց . վէմն որ գլուխ է անկեան , է միայնգամայն և վէմ գլորման եւ գայթակղութեան : « Վէմն՝ զոր անարգեցին շինողքն նա եղև գլուխ անկեան և վէմ գլորման և վէմ գայթակղութեան » . Ա . Պիտ . Բ . 7 . Ճշմարիտ է , որ ով կը լսէ և չը հաւատար նոյն վէմն , մեծ է նորա դատասարտութիւնը : Վասն զի դատասարտութիւն չը հաւատարու անհրաժեշտ հետեւանքն է , բայց այսու երբէք չը նուազիր պաշտօնի գերազանցութիւնը :

Միով բանիւ , կարող եմք մեր խօսքը անխօփել և համառօտիւ ասել , որչափ գերազանց է Քրիստոնէութիւնը , այնչափ գերազանց է և հովուական պաշտօնը : Նոյն պաշտօնին կը վերաբերին Քրիստոնէութեան բարեբնութքը , զորս կը կրէ եւ կը շարունակէ : Աւստի , երբ Քրիստոնէութեան գերազանցութեանը հետ չափենք նաև պաշտօնի գերազանցութիւնը , այն ծաւնանակ կը հասնանք լիովին հովուական պաշտօնի մեծութիւնը և կարեւորութիւնը :